

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ԵՎ ԼԵՐՍՈՆՏՈՎ

«Տեսականորեն միայն բանաստեղծները պետք է թարգմանեն բանաստեղծություններ, իրականում հազվագյուտ բանաստեղծներ կգտնեք, ովքեր լավ թարգմանիչ են, որովհետև նրանք գրեթե միշտ օտարալեզու բանաստեղծությունն օգտագործում են որպես ելման կետ իրենց սեփականը գրելու համար»:

Օկտավիո Պաս

Հայ թարգմանչաց դպրոցում իր մեծ ներդրումն ունեցած Պարույր Սևակը դարձավ իր կողմից թարգմանվող բոլոր ստեղծագործությունների համահեղինակ իր վառ երևակայությամբ, իր ուրույն աշխարհընկալմամբ և իր գրական-գեղագիտական հայացքներով ու նախասիրություններով, իր լեզվի ու ոճի առանձնահատկություններով, և հաստատեց իր՝ զուտ սևակյան ոճը թարգմանության մեջ: Սևակը բնավ չանցավ «թարգմանական սուբյեկտիվիզմի» սահմանագիծը: Բնախնդրությունն ու պահանջկոտությունն օգնեցին Սևակ թարգմանչին, և նա մեծ գեղագետի մանրակրկիտությամբ ապացուցեց, որ թարգմանության գործում չկան մանր և երկրորդական մանրամասներ: Թարգմանության գործում նրան օգնեց նաև գեղարվեստական ճաշակն ու խորությամբ արտահայտված անհատականության գործոնը:

Սևակին մտահոգել է թարգմանական արվեստի հարցը: Դարերի խորքից եկող մեր թարգմանական գործի նորությա հապաղումն անգամ կարող էր ճակատագրական անդրադարձ ունենալ ժամանակի գրականության վրա. «Պլատոնին և Արիստոտելին 6-րդ դարում թարգմանած ազգի փուլ, հայրենասերը չպիտի՝ մտածի նաև այս նորությա թարգմանությունների մասին» (V, 296): Ռուս և համաշխարհային գրականության դասական հեղինակները միշտ էլ ձգել են Պարույր Սևակին: Սևակի թարգմանական գործունեությանն անդրադարձել է Ա. Արիստակեսյանը և ինչպես հարկն է կարևորել նրա թարգմանական գործունեության նշանակությունը/1,105-108/:

Այդ հարցին իր մենագրության մեջ առանձին գլխով անդրադարձել է նաև Դ. Գասպարյանը/2,353-370/:

Սևակ թարգմանչին այս կամ այն չափով անդրադարձել են նաև այլ գրականագետներ:

Որոս գրականությունից Սևակը թարգմանել է Նեկրասովի, Պուշկինի, Լերմոնտովի, Բրյուսովի, Մայակովսկու, Բալմոնտի, Եսենինի, Բլոկի, Սերվինսկու, Մարտինովի, Տիխոնովի, Ջվյագինցևայի, Մարշակի, Լուգովսկոյի, Լուկոնինի, Ալիգիերիի, Դոլմատովսկու, Ռոժդեստվենսկու, Սուրկովի առանձին ստեղծագործություններ: Թարգմանել է նաև Գորոդեցկու հուշագրությունը՝ նվիրված Թումանյանին, ռուսագիր հայ արձակագիր Նորա Աղամյանի վիպակները: Սևակի այս թարգմանությունները տպագրվել են մամուլում, առանձին գրքերի մեջ, իր հատորներում: Նման երկերի թարգմանության ժամանակ Սևակը ձգտել է մոտենալ բնագրին և փոխանցել ընթերցողին ոչ միայն իմաստը, այլև ոգին, ձգտել է ընթերցողին հասցնել համաբերել բանաստեղծի խոսքը, ոճի և լեզվի հոգեհարազատությունն ու իմաստային համահնչելությունը: Եվ քանի որ թարգմանությունը բնագրին մոտենալու փորձ է, առավելագույնս է վերարտադրել նրա գաղափարն ու ոգին, ինչպես նաև՝ գեղարվեստական արժեքը:

Այս առումով Լերմոնտովի «Պևը» պոեմը, իմաստային առումով չափազանց խիտ և հագեցած, Սևակին ձգեց իր տաղաչափական ամփոփնակությամբ: Պոեմ, որ միօրինակ չի ընթերցվում նաև այն պատճառով, որ միևնույն տողաչափով չի գրված: Անցնելով այդ պոեմի թարգմանությանը՝ Սևակը գերազանց գիտեր, որ մեկ տողաչափությամբ չգրված, իմաստային առումով չափազանց խիտ հագեցվածություն ունեցող այդ պոեմի թարգմանության ժամանակ յուրաքանչյուր անձնություն կարող է խաթարել հեղինակային միտքը, սակայն Սևակի թարգմանությունը հաստատեց լերմոնտովյան ստեղծագործության հայերեն համարժեքն ստեղծելու իրավունքը: Այս թարգմանության մեջ Սևակը և՛ երագող է, և՛ դրվատող, և՛ ստեղծագործող: Սևակը խստապահանջ էր. և այս աշխատանքում ամեն ինչ արվել է համապատասխան բնագրին, բերվելիք օրինակները կփաստեն դա: Ստեղծագործության չափազանց համադրվածությունն ու հագեցվածությունը թարգմանչին բնավ էլ չեն «մոլորեցնում», և եթե խնդրին մոտենանք այն տեսանկյունից, որ հայերեն առաջին անգամ չէ, որ երկը թարգմանվում է, ապա պետք է շեշտենք հայ թարգմանության համար կարևոր մի նորույթ. սևակյան թարգմանությունը հարազատ է բնագրին:

Գրականագետ Ա. Լեյտեսը իր «Թարգմանաց արվեստի պարադոքսները» հոդվածում հաջողված և ողջունելի է համարում այն թարգմանությունը, ուր թարգմանությունը «գերազանցում» է բնագրին: Սիա օրինակներ, որոնք

կապացուցեն. որ Լեւոնոստովի «Դևի» սևակյան «ընթերցումը» իր տեսակի մեջ բարձրարժեք թարգմանություն է:

Համադրենք Լեւոնոստովի «Դևը» ստեղծագործության հայացված երկու տարբերակ՝ Վազգեն Գևորգյանի/3, 92/ և Պարույր Սևակի թարգմանությունները: 1986 թ. Մ. Լեւոնոստովի հանրահայտ պոեմը լույս է տեսնում հայերեն և ռուսերեն՝ Մ. Ա. Վրուբելի նկարազարդումներով: Թարգմանությունը ներառում է 5213 բառ: 1973 թվականին հրատարակվում է Պարույր Սևակի թարգմանությունը (III, 280-315), որը ներառում է 5316 բառ: Լեւոնոստովի «Դևը» պոեմի բնագրում գործածված է 4791 բառ: Սևակ թարգմանչին հաջողվել է պահպանել պոեմի և՛ ազգային ու պատմական առանձնահատկությունները, և՛ բովանդակայինը՝ վառ ու զգացմունքային ոճը, և միևնույն ժամանակ պոեմի իրադրությունն ու խոսքաշարը (լայն ու նեղ խոսքաշար) իր ճիշտ դրսևորման բոլոր առանձնահատկություններով երևան հանել հայերեն թարգմանության մեջ: Իր ուսումնասիրության մեջ միանգամայն ճիշտ է նկատել Դ. Գասպարյանը. «Լեւոնոստովի պոեմի թարգմանությանը նպաստել ու գեղարվեստական նախադրյալ են հանդիսացել թուանյանական ավանդույթները՝ թե՛ թարգմանական, թե՛ ինքնուրույն, և հատկապես՝ «Անուշ»-ը: Դրա հիմքը նախ՝ բուն նյութն է. որ ունի արևելյան գրույցի ժողովրդական երանգավորում, և ապա՝ նյութը վերարտադրելու եղանակը»/4,364/: Միջանկյալ մտաբերենք, որ Հ. Թումանյանը թարգմանել է Լեւոնոստովի «Սցիիի» պոեմը, ինչպես նաև՝ «Ես չեմ ուզում մարդ իմանա...» և «Հրեշտակ» բանաստեղծությունները:

Բնական է, որ թարգմանության ընթացքում հաճախ խոսքաշարն է թելադրել ձևաբանական կամ շարահյուսական միջոցների ընտրությունը: Ելնելով խոսքաշարի ընձեռած հնարավորությունից՝ ահա այս անցումներն են կատարվել երկու թարգմանիչների մոտ.

Վազգեն Գևորգյան.

Նույնիսկ ցնծության պայծառ օրերին
Նրա տոնական հանդերձը երբեք
Հեր եղել այդքան երվեմավառ չքեղ:
Ծաղկունքն հարազատ լեռնաձորերի
(Այդ էր պահանջում հնավանդ մի ծես)
Ողողել էր իր բույրով Թամարին
Ու սեղմված անկյանք ծեռքի մեջ կարծես
Երկրին տալիս էր հրածեշտ վերջին: (էջ 77)

Պարույր Սևակ.

Իր ուրախության ոսկե օրերին
Հեր եղել երբեք հագուստը նրա
Այդքան բազմագույն և այդքան շռայլ.

Առատ ծաղկունքը ծանոթ ծորերի
(Ըստ սովորության հին-հին դարերի)
Իր բույնն էր փռել Թամարի վրա: (էջ 308)

Ձևաբանական փոփոխություններից զատ՝ մեղ խոսքաշարը հաճախ
ծշտում է բառի համարժեքի ընտրությունը, լինում են բառեր, որոնք թարգմա-
նության լեզվում չունեն իրենց բացարձակ համարժեքները: Սակայն թարգմանիչն
այս պարագայում զանց չի առնում այն իմաստային նրբերանգները, որոնք
ընկալելի են բնագրի վերարտահայտման գործընթացում: Օրինակ.

Լերմոնտով. И входит он, любуясь готовый,
С духом, открытою для добра,
И мыслит он, что жизни ховой
Пришла желанная пора.

(2-րդ մաս, 8-րդ գլուխ, էջ 50)

Սևակ. Եվ մերս է մտնում՝ սրտում ծով մի սեր,
Բարության առաջ լայն բացվող հոգով,
Միտք է անում, որ ժամն է հասել,
Ցանկալի ժամը՝ ապրել մոր կյանքով:

(2-րդ մաս, 8-րդ գլուխ, էջ 297)

Ինչպես նկատելի է, փոխվել են բառեր, որոնց համարժեքը չկա
թարգմանության լեզվում: Նրանք չունեն իրենց բացարձակ համարժեքները,
բայց թարգմանությունը դրանից չի տուժում: Ասվածը դիտարկենք մեկ
օրինակով.

Լերմոնտով. Вечерней мглы покров возгушный
Уж холмы Грузии одел,
Привычке сладостной послушный
В обитель Демон прилетел,
И долго, долго он не смел
Святыню мирного приюта
Нарушить.

(2-րդ մաս, 7-րդ գլուխ, էջ 44)

Վ. Պետրոսյան. Օղեղեն քողի իրիկվա մութի
Պատել է վրաց լեռներն համորեն,
Հլու հաճելի իր սովորությի՝
Ղևը մենաստան սլացավ նորեն,
Բայց երկա թ, երկա թ չէր իշխում խախտել
Սրբությունն անդորր այդ մենաստանի:

(2-րդ մաս, 7-րդ գլուխ, էջ 44)

Պ. Սևակ. Իրիկվա մեգի ծածկույթը խոնավ
Լեռներն է պատում սեգ Վրաստանի,
Իր սովորույթի հմայքին խոնարհ,
Ղևը մոտ թռավ սուրբ մենաստանին:
Բայց երկա թ, երկա թ սուրբ օթևանի

Հանգիստը խախտել դեռ սիրտ անել

Հեր համարձակում:

(2-րդ մաս, 7-րդ գլուխ, էջ 44)

Ահա և տիպական օրինակ, ուր հենց խոսքաշարն է թելադրել բայի նման վերարտահայտումը:

Ժպ րվպս վՈՐցՔՈՅՖ - չեր իշխում խախտել և
խախտել սիրտ անել չեր համարձակում
կՐՈսպՑպս - սլացավ և մոտ թռավ

Տույց տրված բայական կապակցությունները (թարգմանության մեջ ավելացված) համարժեքության սկզբունքի պահպանման համար են, տարրեր, որոնք չկան բնագրում և իրենց իմաստային ներմղման մեջ չեն հակասում թարգմանության լեզվաբանական խնդիրներին:

Երկու թարգմանիչներն էլ հաշվի են առել ա/ ստեղծագործության ամբողջականությունը, բ/ ժամանակաշրջանի և ազգային առանձնահատկությունների վերարտահայտման անհրաժեշտությունը, գ/ հնարավորինս հավատարիմ են մնացել հեղինակի ոճին:

Երբ համադրում ենք երկու թարգմանությունները, նկատելի է դառնում Սևակ թարգմանչի առավելությունը: Սևակ բանաստեղծի լեզվամտածողությունն օգնել է անխաթար պահել թարգմանվող նյութի պատկերային համակարգն իր ամբողջ շքեղությամբ, լեզվական համարժեքությունը ևս բոլորովին չի խաթարվել, թեև հաճախ Սևակ թարգմանիչն «իրենն է ներդնում» այդ համակարգում: Այդուհանդերձ, Սևակը թարգմանության ընթացքում հնարավորինս հավատարիմ է մնում հեղինակի ոճին:

Եվ ինչպես տեսանելի է դառնում, թարգմանության ողջ ընթացքում Սևակ բանաստեղծը «առատորեն վարձատրում է» Սևակ թարգմանչին: Օրինակ.

Լերմոնտով.

Дух беспокойный, дух порочный,
Кто знал тебе во мне пол ночью,
Тбoux поклонников здес нет,
Зло не дышало здес по ныне,
К моеу любви, к моеу сбятыне,
Не прологау пруступный след,
Кто знал тебя.

Վազգեն Գևորգյան.

(2-րդ մաս, 9-րդ գլուխ, էջ 50)
Ոգի անհանգիստ, ոգի պղծագույն,
Այս մութ գիշերին ով է քեզ կանչել,
Չարությունն այստեղ ցայսօր չի շնչել,
Ոչ ոք քեզ այստեղ չի երկրպագում,
Իմ սիրտ վրա և իմ սրբության,

Մի փորձիր ձգել արատավոր հետք,
Ո՞վ է քեզ կանչել:

(2-րդ մաս, 9-րդ գլուխ, էջ 50)

Պարույր Սևակ.

Ոգի անհանգիստ, ոգի պղծագույն,
Ով է քեզ կանչել գիշերվա միգույն,
Ցայսօր չարն այստեղ չի շնչել բնավ,
Եվ չունես այստեղ դու երկրպագու,
Դեպի սրբությունն ու սևն իմ մաքուր,
Հանցավոր ճամփա մի ծգտիր բանալ,
Ո՞վ է քեզ կանչել:

(2-րդ մաս, 9-րդ գլուխ)

Սույն դիտարկման և համադրման մեջ ինչով ենք բացատրում թարգմանության հաջողված լինելը՝ թարգմանության մեջ չկան ոչ ավելացված տողեր և ոչ ավելացված բառեր, Սևակ բանաստեղծը թարգմանություն չի ներմուծում՝ Լերմոնտովի ոճին անհարկի պատկերներ, երանգավորումներ: Իսկ ի՞նչ գործառույթ է կատարում ազատությունը Սևակի թարգմանության պարագայում. այն օգնում է է՛լ ավելի կատարյալ դարձնել թարգմանությունը: Ոչ թե վերարտադրելու՝ գուրկ հնչերանգից, ռիթմից, ոճական, արտահայտչական միջոցներից, այլ կատարելու ստեղծագործական փոխադրում:

Սևակը հազվագյուտ բանաստեղծ է, հետևաբար, բնական է նրա գերազանց թարգմանիչ լինելը:

Օգտագործված գրականություն

1. Ա. Արխտակեսյան, Պարույր Սևակ, էջ 105-108:
2. Դ. Գասպարյան, Պարույր Սևակ, 2001, էջ 353-370:
3. Մ. Լերմոնտով, Դևր. արևելյան զրույց, Ե., «Սովետական գրող», 1986, էջ 92:
4. Դ. Գասպարյան, Պարույր Սևակ, էջ 364: